ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, ս/թ. հոկտեմբերի 28-ին, Երևանի ս. Սարգիս եկեղեցում, ձեռամբ Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանի, կատարվում է քահանայական ձեռնադրություն և օծում:

Այդ օրը քահանայական ձեռնադրություն են ստանում Մայր Աթոռի միաբան Ստեփանոս սրկ. Զագալյանը և Երևանի ս. Սարգիս եկեղեցու սարկավագներ Պողոս Զուլֆայանն ու Իշխան Երանոսյանը:

Սուրբ պատարագի ընթացքում, «Ողջույն»-ից առաջ, պատարագիչ սրբազանը կատարում է երեք նորընծաների ձեռնադրությունն ու օծումը:

Ձեռնադրության ավարտին սրբազանը շնորհավորում է նորընծաներին և որպես հոգևոր ծնող տալիս հայրական իր օրհնություններն ու հորդորները:

Նորընծաներից Պողոս քհն. Զուլֆայանը (ավազանի անունը Պողոս) ծնվել է 1924 թվականին Սիրիայի Հոմս քաղաքում, իսկ Հակոբ քհն. Երանոսյանը (ավազանի անունը Իշխան) ծնվել է 1952 թ. Վարդենիսում (Հայաստան), քահանայի ընտանիքում:

Երկու քահանա հայրերը իրենց քառասունքը Երևանի ս. Սարգիս եկեղեցում անցկացնելուց հետո հոգևոր ծառայության կոչվեցին Արարատյան թեմում:

Նույն օրը, երեկոյան, ս. Էջմիածնի Մայր տաճարում կատարվում է տ. Ստեփանոս կուսակրոն քահանայի վեղարի տվչությունը՝ ձեռամբ տ. Սիոն արքեպ. Մանուկյանի:

Տ. Ստեփանոս աբեղայի քահանայական կոչումը կատարվել էր Էջմիածնում երկու օր առաջ՝ ձեռամբ Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանի:

Տ. ՍՏԵՓԱՆՈՍ ԱԲԵՂԱ ԶԱԳԱԼՅԱՆ

Տ. Ստեփանոս աբեղա Զագալյանը ծնվել է 1946 թվականի հոկտեմբերի 30-ին, Հունաստանի Պիրեա քաղաքում:

1951 թվականին ընտանիքով գաղթում են Արգենտինա, և նա իր նախնական կրթությունը ստանում է Բուենոս-Այրեսի տեղական վարժարանում: Ապա 1954 թ. ընտանիքով կրկին վերադառնում են Հունաստան, և 1954—60 թթ. նա սովորում է Քոքինիայի «Ազգային», «Զավարյան» և «Գալբակյան» վարժարաններում:

Նախակրթարանը գերազանց ավարտելուց հետո, ուսումը շարունակում է Նիկոզիայի (Կիպրոս) Մելգոնյան կրթական հաստատությունում, որը 1966 թվականին

ավարտելուց հետո ընդունվում է Բեյրութի «Հայկազյան» քոլեջ, իսկ 1968—70 թվականներին սովորում Բեյրութի Ամերիկյան համալսարանում, որն ավարտում է փիլիսոփայության Bachalor of Arts-ի դիպլոմով:

Հոգևոր կոչում զգալով իր մեջ, 1977 թ. մարտին գալիս է Մայր Աթոռ, հետևում է հոգևոր ճեմարանի կրոնագիտական և հայագիտական որոշ դասընթացներին և միաժամանակ անգլերեն լեզու դասավանդում հոգևոր ճեմարանում:

Նույն թվականի դեկտեմբերին ձեռնադրվում է սարկավագ՝ ձեռամբ տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանի:

Նորապսակ տ. Ստեփանոս աբեղան իր քառասունքի օրերը անցկացրեց Մայր Աթոռում:

Նորընծա հայր սուրբը գտնվում է իր ուժերի հաստատության և ծաղկման շրջանում և պատրաստ է անսակարգ նվիրումով և բարեխղճորեն ծառայել Մայր Աթոռին, իր ազգին ու եկեղեցուն՝ Վեհափառ Հայրապետի հովանու ներքո: